Հաստատում եմ
Է. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
(Պատվիրատուի ղեկավարի անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

«26» դեկտեմբերի 2009թ.

Կ.Տ.

## ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Հիմնական տեղեկություններ գնման մասին

1.1. Պատվիրատուի

Անվանումը ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Հասցեն Հանրապետության Հրապարակ կառավարական 2 շենք

1.2. Գնման առարկայի տեսակը

ապրանք ☐ աշխատանք ■ ծառայություն ☐

1.3. Կարիքի բավարարման միջոցը

գնում ■ վարձակալություն ☐ լիզինգ ☐

1.4. Գնման առարկայի համառոտ նկարագիրը

- նախարարության դիվանագիտական դպրոցի հիմնանորոգման աշխատանքներ

1.5. Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձի

Անվանումը (անունը, ազգանունը) ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Հասցեն ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական 2 շենք

1.6. Կնքված գնման պայմանագրի (կցվում է)
Անվանումը (անունը, ազգանունը) «ԷԴՌԻՋ ՇԻՆ ՍՊԸ

Հասցեն ք.Երևան, Թորոսենցի 5, բն 27

Ծածկագիրը N ՀՀ ԱԳՆ ՄԱՇՁԲ-75
Կնքման ամսաթիվը 26.12.09թ
Գործողության ժամկետը մինչև կողմերի պարտականությունների լրիվ ծավալով կատարումը
Գինը 36810.05 հազար դրամ,
1.7. Գնման ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե

1.8. Գնումների պաշտոնական տեղեկագրում կնքված պայմանագրի մասին տեղեկատվություն հրապարակելու նպատակով պատվիրատուն լիազոր մարմնին ներկայացրե՞լ է պահանջվող տեղեկատվության տեքստը

Այո ☐ Ոչ ■

2. Գնման գործընթացի նախապատրաստումը
2.1. Գնման պահանջի ծագման իրավական հիմքը և օրը՝ ՀՀ կառավարության 24.12.2009թ- թիվ 1473-Ն որոշում

2.2. Պատվիրատուի ղեկավարը սահմանել է՝

Պատասխանատու ստորաբաժանում ■ Տեխնիկական հսկողության հանձնաժողով ☐

Անվանումը ՀՀ ԱԳՆ գործերի կառավարչություն
Ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը գործերի կառավարիչ Ռ. Շաքարյան

2.3 Մեկ անձից գնման ձևի կիրառման պայմանն ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի համապատասխան կետի՝

V արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և գնման այլ ձևի կիրառումը՝ ժամկետի առումով անհնար է, պայմանով որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել, ինչպես նաև եթե գնման առարկան ներառված չէ պարբերական մրցույթով կնքված պայմանագրերում.

2.4 Մեկ անձից գնման ձևի կիրառման ընտրված պայմանի հիմնավորումը՝ Դիվանագիտական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսվել են ՀՀ կառավարության 24.12.2009թ- թիվ 1473-Ն որոշմամբ: Հաշվի առնելով բյուջետային տարվա ավարտման հանգամանքով պայմանավորված նշված աշխատանքների ձեռքբերման համար մրցակցային գնման այլ ձևերի կիրառման ժամկետայնության հանգամանքը, գնման գործընթացը կազմակերպվել է իրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ձևով:

3. Գնման պայմանագրի կնքումը

3.1. Գնման պայմանագիրը կնքելու նպատակով պատվիրատուի առաջարկը ներկայացնելու միջոցը՝

Մեկ անձին պայմանագիր կնքելու առաջարկի ներկայացում ■

3.2. Տեղեկություններ այն անձանց (անձի) մասին որոնց ուղարկվել է պատվիրատուի առաջարկը.

| N | Անվանումը (անուն, ազգանունը | Հասցեն | Ներկայացված առաջարկի հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը կցվում է |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | «ԷԴՌԻՋ ՇԻՆ» ՍՊԸ շինարարական ընկերություն | ք. Երևան Թոթովենցի 5, բն 27 | 26.12.09թ N 19/18501 գրություն |

3.3. Տեղեկություններ պատվիրատուի առաջարկը ընդունած անձանց վերաբերյալ.

| N | Անվանումը (անուն, ազգանունը | Հասցեն | Առաջարկը ընդունելու հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը կցվում է |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | «ԷԴՌԻՋ ՇԻՆ» ՍՊԸ շինարարական ընկերություն | ք. Երևան Թոթովենցի 5, բն 27 | 26.12.09թ N 26/12 գրություն |

4. Գնման ընթացակարգի արձանագրության վարման պատասխանատու անձի

Անուն, ազգանունը Ջ. Աղամյան

ԱԳՆ ֆինանսական վարչության բյուջետային ծրագրավորման բաժնի վարիչ

Հեռախոսը /աշխ/ 54 40 41 288

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

26.12.2009թ.
19/18501

«ԷԴՌԻՋ ՇԻՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ԷԴՈՒԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հովհաննիսյան

Հայտնում ենք, որ ՀՀ արտաքին գործերի նախարարության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել հիմնանորոգման աշխատանքներ:

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը Ձեզ առաջարկում է կատարել նշված աշխատանքները:

Գնման գործընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է ՀՀ արտաքին գործերի նախարարություն ներկայացնել Ձեր կողմից հաստատված՝ ստորագրված և կնքված հայտարարություն այն մասին, որ «ԷԴՌԻՋ ՇԻՆ» ՍՊԸ՝

1. ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ և աշխատանքային ռեսուրսներ.

2. դատական կարգով անվճարունակ չի ճանաչվել, պայմանագրի կատարման համար անհրաժեշտ գույքը արգելանքի տակ չէ, չի գտնվում լուծարման գործընթացում.

3. կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտարարությունը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում չպետք է՝

- դատապարտված լինի տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,
- գնման պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած լինի կեղծ տվյալներ,
- իր գործողությամբ կամ անգործությամբ խախտած լինի գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

Համաձայնության դեպքում խնդրում ենք ներկայացնել սույն գրության մեջ նշված հայտարարությունը և գնային առաջարկ:

Միաժամանակ, կից ներկայացնում ենք հիշյալ աշխատանքների գնման պայմանագրի նախագիծը:

Հարգանքով՝

ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ Ռ. ՇԱՔԱՐՅԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ, ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2 ՇԵՆՔ, ԵՐԵՎԱՆ 0010; ՀԵՌ. 37410/544041, ՖԱՔՍ 37410/543925
2 GOVERNMENT BUILDING, REPUBLIC SQUARE, YEREVAN 0010, ARMENIA; TEL. 37410/544041, FAX 37410/543925; COMGROUP@MFA.AM

26.12.09թ
N 26/12

ՀՀ ԱԳՆ գործերի կառավարիչ
Ռ. Շաքարյանին

Ի պատասխան Ձեր 26.12.09թ-ի թիվ 19/18501 գրության, սույնով հավաստում ենք, որ «ԷԴՌԻՁ ՇԻՆ » ՍՊԸ՝

- ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.
- դատական կարգով անվճարունակ չի ճանաչվել, լուծարման գործընթացում չի գտնվում, պայմանագրի կատարման համար անհրաժեշտ գույքը արգելանքի տակ չի գտնվում,
- կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում՝

1. դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար
2. գնման պայմանագիր կնքելու նպատակով չի ներկայացրել կեղծ տվյալներ,
3. իր գործողությամբ կամ անգործությամբ չի խախտել գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

«ԷԴՌԻՁ ՇԻՆ» ՍՊԸ հայտնում է իր համաձայնությունը՝ Ձեր վերոհիշյալ գրության մեջ նշված աշխատանքները կատարել 36 810 050 հազար ՀՀ դրամով՝ համաձայն կցվող նախահաշվի:

հարգանքներով՝

«ԷԴՌԻՁ ՇԻՆ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ԱԳՆ ՄԱՇՁԲ - 75
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ք. Երևան « » -------------- __2009թ.

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս Գործերի կառավարիչ Ռ. Շաքարյանի, որը գործում է կանոնադրության հիման, վրա մի կողմից, և «ԷԴՌԻՋ ՇԻՆ » ՍՊԸ, ի դեմս տնօրեն Է. Հովհաննիսյանի , այսուհետ՝ «Կապալառու», որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին պայմանագիր հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուի համար կատարել ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, նախագծա-նախահաշվային փաստաթղթերին և սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի պահանջներին համապատասխան նախարարության դիվանագիտական դպրոցի հիմնանորոգման աշխատանքներ՝ /այսուհետև՝ «Աշխատանքներ», իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքների արդյունքը և վճարել դրա համար:

1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Աշխատանքների կատարվում են ՀՀ կառավարության 24/12/09թ. թիվ 1473-Ն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 25 աշխատանքային օրվա ընթացքում:

1.3. Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների արդյունքի համար նախատեսվում է երաշխիքային ժամկետ, որը սահմանվում է աշխատանքները ողջ ծավալով ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը:

## 2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից Աշխատանքների իրականացման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կապալառուի գործունեությանը.

2.1.2. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուի կողմից իրականացված Աշխատանքները չեն համապատասխանում սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված պահանջներին և /կամ/ խախտվել է Աշխատանքների իրականացման ժամկետը և Աշխատանքները չեն կարող իրականացվել Կապալառուի համար ընդունելի ժամկետում:

2.1.3. Չընդունել Աշխատանքները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին համապատասխան, սույն պայմանագրի 1.1. կետի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.1.4. Մինչև Աշխատանքների իրականացումը, հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Կապալառուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 5 օր առաջ տեղեկացնելով Կապալառուին:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Ուսումնասիրել և ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան իրականացված Աշխատանքները, իսկ իրականացման արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կապալառուին:

2.2.2. Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ այդ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5. կետով նախատեսված տույժը:

2.2.3 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված երաշխիքային ժամկետի ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում Կապալառուին ներկայացնել իրատեսական ժամկետում թերությունների վերացման պահանջ:

2.3. Կապալառուն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան իրականացված Աշխատանքները:

2.3.2. Մինչև Կապալառուի կողմից աշխատանքների իրականացումը, հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 5 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.3.3. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 5.5. կետով նախատեսված տույժը:

2.4. Կապալառուն պարտավոր է՝

2.4.1.Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, նյութերով ու պատշաճ որակով:

2.4.2. Սույն պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքների իրականացումը ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ:

2.4.3. Սույն պայմանագրի 2.1.2. կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.4. Սույն պայմանագրի 2.1.3. կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել պայմանագրի 5.2. կետով նախատեսված տուգանքը:

2.4.5. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.6. Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին՝ Պատվիրատուի կողմից սահմանված իրատեսական ժամկետում վերացնել թերությունները:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Կապալառուն Աշխատանքների կատարման ավարտից հետո հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում իրականացված Աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ :

3.2. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքները չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3.Աշխատանքները ընդունված է համարվում հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմանի ստորագրելու/հաստատելու/ պահից:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրի ընդհանուր գինը, ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է ----------------------- /---------------------------------------------------- / ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը, պարտադիր այլ վճարները:

4.2. Սույն պայմանագրի 4.1 կետում նշված գումարի 100%-ը, Պատվիրատուն միանվագ կարգով, որպես կանխավճար փոխանցում է Կապալառուի հաշվարկային հաշվին սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից 3 բանկային օրվա ընթացքում, որը մարվում է յուրաքանչյուր անգամ ընդունված աշխատանքի արժեքի 100%-ի չափով:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կապալառուը պատասխանատվություն է կրում կատարված Աշխատանքների որակի և սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2. Սույն պայմանագրի 2.1.2. կետով նախատեսված դեպքերում պայմանագրի լուծման, 2.1.3. կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքները չընդունվելու յուրաքանչյուր դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի գնի 0,05 %-ի չափով:

5.3. Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքների կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքների արժեքի 0,05%-ի չափով:

5.4. Սույն պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքների կատարման համար Կապալառուին վճարման ենթակա գումարներից:

5.5. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 %-ի չափով:

5.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ձևով կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.8. Կապալառուի կողմից երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Պատվիրատուի սահմանած ժամկետում չվերացնելը հանգեցնում է Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանավորված Պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

5.9. Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կապալառուն պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասները, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.4. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով՝ 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1 հավելվածը համարվում է պայմանագրի անբաժանելի մասը:

7.5. Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտատեր կողմի գրավոր համաձայնության:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| | |
|---|---|
| ՀՀ արտաքին գործերի նախարարության<br>ք.Երևան, Կառավարական 2 շենք.<br>ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/հ 900011196368<br>ՀՎՀՀ 02527728 | «ԷԴՈՒՉ ՇԻՆ» ՍՊԸ<br>ք.Երևան, Թոթովենցի 5, բն 27<br>«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ<br>h/h2472300134320010<br>ՀՎՀՀ 00858311 |
| ____________ Ռ.Շաքարյան | ____________Է. Հովհաննեսյան |

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ԱԳՆ ՄԱԾՁԲ - 75
# ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ք. Երևան « 26 » դեկտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս Գործերի կառավարիչ Ռ. Շաքարյանի, որը գործում է կանոնադրության հիման, վրա մի կողմից, և «ԷԴՌԻՁ ՇԻՆ » ՍՊԸ, ի դեմս տնօրեն Է. Հովհաննիսյանի , այսուհետ՝ «Կապալառու», որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին պայմանագիր հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ծևով և ժամկետներում Պատվիրատուի համար կատարել ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, նախագծա-նախահաշվային փաստաթղթերին և սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի պահանջներին համապատասխան նախարարության դիվանագիտական դպրոցի հիմնանորոգման աշխատանքներ՝ /այսուհետև՝ «Աշխատանքներ»/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքների արդյունքը և վճարել դրա համար:

1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Աշխատանքների կատարվում են ՀՀ կառավարության 24/12/09թ. թիվ 1473-Ն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 25 աշխատանքայի օրվա ընթացքում:

1.3. Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների արդյունքի համար նախատեսվում է երաշխիքային ժամկետ, որը սահմանվում է աշխատանքները ողջ ծավալով ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը:

## 2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից Աշխատանքների իրականացման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կապալառուի գործունեությանը.

2.1.2. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուի կողմից իրականացված Աշխատանքները չեն համապատասխանում սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված պահանջներին և /կամ/ խախտվել է Աշխատանքների իրականացման ժամկետը և Աշխատանքները չեն կարող իրականացվել Կապալառուի համար ընդունելի ժամկետում:

2.1.3. Չընդունել Աշխատանքները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին համապատասխան, սույն պայմանագրի 1.1. կետի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.1.4. Մինչև Աշխատանքների իրականացումը, հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Կապալառուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 5 օր առաջ տեղեկացնելով Կապալառուին:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Ուսումնասիրել և ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան իրականացված Աշխատանքները, իսկ իրականացման արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կապալառուին:

2.2.2. Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ այդ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5. կետով նախատեսված տույժը:

2.2.3 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված երաշխիքային ժամկետի ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում Կապալառուին ներկայացնել իրատեսական ժամկետում թերությունների վերացման պահանջ:

**2.3. Կապալառուն իրավունք ունի՝**

2.3.1. Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան իրականացված Աշխատանքները:

2.3.2. Մինչև Կապալառուի կողմից աշխատանքների իրականացումը, հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 5 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.3.3. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 5.5. կետով նախատեսված տույժը:

**2.4. Կապալառուն պարտավոր է՝**

2.4.1.Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, նյութերով ու պատշաճ որակով:

2.4.2. Սույն պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքների իրականացումը ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ:

2.4.3. Սույն պայմանագրի 2.1.2. կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.4. Սույն պայմանագրի 2.1.3. կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել պայմանագրի 5.2. կետով նախատեսված տուգանքը:

2.4.5. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.6. Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին՝ Պատվիրատուի կողմից սահմանված իրատեսական ժամկետում վերացնել թերությունները:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Կապալառուն Աշխատանքների կատարման ավարտից հետո հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում իրականացված Աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ :

3.2. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքները չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3.Աշխատանքները ընդունված է համարվում հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմանի ստորագրելու/հաստատելու/ պահից:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրի ընդհանուր գինը, ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է 36 810 050 /Երեսունվեց միլիոն ութ հարյուր տաս հազար հիսուն / ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը, պարտադիր այլ վճարները:

4.2. Սույն պայմանագրի 4.1 կետում նշված գումարի 100%-ը, Պատվիրատուն միանվագ կարգով, որպես կանխավճար փոխանցում է Կապալառուի հաշվարկային հաշվին սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից 3 բանկային օրվա ընթացքում, որը մարվում է յուրաքանչյուր անգամ ընդունված աշխատանքի արժեքի 100%-ի չափով:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կապալառուը պատասխանատվություն է կրում կատարված Աշխատանքների որակի և սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2. Սույն պայմանագրի 2.1.2. կետով նախատեսված դեպքերում պայմանագրի լուծման, 2.1.3. կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքները չընդունելու յուրաքանչյուր դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի գնի 0,05 %-ի չափով:

5.3. Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքների կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքների արժեքի 0,05%-ի չափով:

5.4. Սույն պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքների կատարման համար Կապալառուին վճարման ենթակա գումարներից:

5.5. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 %-ի չափով:

5.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ձևով կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.8. Կապալառուի կողմից երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Պատվիրատուի սահմանած ժամկետում չվերացնելը հանգեցնում է Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանավորված Պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

5.9. Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կապալառուն պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասներն, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.4. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով՝ 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1 հավելվածը համարվում է պայմանագրի անբաժանելի մասը:

7.5. Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց

Կողմերի գրավոր համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտատեր կողմի գրավոր համաձայնության:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՀՀ արտաքին գործերի նախարարության
ք.Երևան, Կառավարական 2 շենք.
ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/հ 900011196368
ՀՎՀՀ 02527728

Ռ.Շաքարյան

«ԷԴՌԻՉ ՇԻՆ» ՍՊԸ
ք.Երևան, Թորոսվենցի 5, բն 27
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ
հ/h2472300134320010
ՀՎՀՀ 00858311

. Հովհաննեսյան

Հավելված N1

N ՀՀ ԱԳՆ ՄԱՇՁԲ - 75

ծածկա•րով պայմանա•րի

«-26» «-12-» 2009թ. կնքված

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Դիվանագիտական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների կատարում

| N/N Ը/Կ | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ | Չափ. միավ. | Քանակ | Միավորի ընդ. արժ. հազ.դրամ | Ընդհանուր արժեքը հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | 1. Քանդման աշխատանքներ | | | | |
| 1 | Մանրահատակ, գորգահատակ և ց/ա շերտ /հատակ/ | $մ^2$ | 95 | 1.50 | 142.50 |
| 2 | Կերամիկական սալիկները և ց/ա շերտը /հատակներ, պատեր/ | $մ^2$ | 60 | 2.00 | 120.00 |
| 3 | Միջանցքի գրանիտե և ց/ա շերտը /հատակ/ | $մ^2$ | 31.5 | 0.70 | 22.05 |
| 4 | Չգործող ջեռուցման գծերը /խողովակներ/, մարտկոցներ /3հատ/ | մ | 50 | 0.50 | 25.00 |
| 5 | Ջրագծեր, կոյուղագծեր | մ | 20 | 0.30 | 6.00 |
| 6 | Միջնորմային բլոկներ, պատուհանագոգեր | $մ^3$ | 5 | 5.00 | 25.00 |
| 7 | Գաջե սվաղ, էլեկտրական լարեր | $մ^2$ | 200 | 0.30 | 60.00 |
| 8 | Քարե պատի քանդում | $մ^3$ | 0.5 | 7.00 | 3.50 |
| 9 | Դռների ապամոնտաժում | $մ^2$ | 15 | 0.60 | 9.00 |
| 10 | Շրիշակների քանդում | մ | 70 | 0.10 | 7.00 |
| | | | | | |
| | 2, Իրականացման աշխատանքներ | | | | |
| | ա) Հատակներ | | | | |
| 1 | Խարամի շերտ անտրեսոլային ծածկի վրայով | $մ^2$ | 2.8 | 2.50 | 7.00 |
| 2 | Ց/ա հարթեցնող շերտ +2,60 մակարդակում 30մմ հաստ. | $մ^2$ | 30 | 3.50 | 105.00 |
| 3 | Հատակների ց/ա հարթեցնող շերտ +-0,00 մակարդակում | $մ^2$ | 124.4 | 3.50 | 435.40 |
| 4 | Միջանցքի ց/ա հարթեցնող շերտ | $մ^2$ | 31.5 | 3.50 | 110.25 |
| 5 | Հատակների ց/ա հարթեցնող շերտ ջրամեկուսացումով | $մ^2$ | 30 | 4.00 | 120.00 |
| 6 | Հատակներ Մարմոլեումով /աստիճաններով, շրիշակներով | $մ^2$ | 135 | 20.50 | 2767.50 |
| 7 | Հատակներ կերամիկական սալերով / խոհանոց ս/հ./ | $մ^2$ | 32 | 13.50 | 432.00 |
| 8 | Միջանցքի գրանիտե սալերով հատակ | $մ^2$ | 31.5 | 45.00 | 1417.50 |
| 9 | Գրանիտե շրիշակներ | $մ^2$ | 3.5 | 45.00 | 157.50 |
| 10 | Մարմարե հատակների հղկում շրջանաձև լսարանում | $մ^2$ | 34 | 4.50 | 153.00 |
| 11 | Աստիճանաձև հատակ փայտյա կմախքով | $մ^3$ | 1.5 | 150.00 | 225.00 |
| 12 | Աստիճանաձև հատակի երեսապատում ДСП տախտակներով | $մ^2$ | 35 | 5.00 | 175.00 |
| 13 | Գորգահատակ ДСП տախտակներովի վրայով | $մ^2$ | 35 | 18.00 | 630.00 |
| 14 | Գորգահատակ սերվերային սենյակում | $մ^2$ | 5 | 18.00 | 90.00 |
| | բ) Պատեր | | | | |
| 1 | Բետոնե միջնորմային բլոկներ 100մմ հաստ. | $մ^2$ | 20 | 2.50 | 50.00 |
| 2 | Սան. հանգույցների պատերի ց/ա սվաղում 20մմ հաստ. | $մ^2$ | 70 | 3.50 | 245.00 |
| 3 | Պատերի երեսապատում կերամիկական սալիկներով | $մ^2$ | 70 | 13.50 | 945.00 |
| 4 | Գիպսաստվարաքղթե պատեր 2 կողմով /տնօրենի սենյակ/ | $մ^2$ | 14 | 10.00 | 140.00 |
| 5 | Գիպսաստվարաքղթե պատեր 1 կողմով | $մ^2$ | 22 | 5.00 | 110.00 |
| 6 | Գաջե սվաղ | $մ^2$ | 220 | 3.50 | 770.00 |
| 7 | Պատերի ներկում լատեքսային ներկով | $մ^2$ | 520 | 4.50 | 2340.00 |
| 8 | Պատերի ներկում լատեքսային ներկով միջանցքում | $մ^2$ | 80 | 4.50 | 360.00 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 9 | Պատերի երեսապատում շպռնապատ ՄԴՖ-ից սալերով | մ$^2$ | 45 | 38.00 | 1710.00 |
| 10 | Պատուհանագոգեր շպռնապատ ՄԴՖ-ից սալերով | մ$^2$ | 1.7 | 40.00 | 68.00 |
| 11 | Շրիշակներ շպռնապատ ՄԴՖ-ից /կաղնու շպռն, լաքապատված/ | մ$^2$ | 10 | 40.00 | 400.00 |
| | գ) Առաստաղներ | | | | |
| 1 | Խոնավակայուն գ/կ առաստաղ խոհանոցում և ս/հ | մ$^2$ | 12 | 6.50 | 78.00 |
| 2 | Գ/կ առաստաղ սերվերային սենյակում | մ$^2$ | 4.2 | 6.00 | 25.20 |
| 3 | Գաջի սվաղում +5,10 նիշում | մ$^2$ | 30 | 4.00 | 120.00 |
| 4 | Գաջի սվաղում +2,40 նիշում | մ$^2$ | 30 | 4.00 | 120.00 |
| 5 | Գիպսե դեկորատիվ տարրերի մասնակի վերանորոգում, ներկում | մ$^2$ | 5 | 8.00 | 40.00 |
| 6 | Առաստաղների ներկում լատեքսային ներկով | մ$^2$ | 220 | 5.00 | 1100.00 |
| 7 | Առաստաղների ներկում լատեքսային ներկով միջանցքում | մ$^2$ | 30 | 5.00 | 150.00 |
| | դ) Դռներ և պատուհաններ | | | | |
| 1 | Ալյումինե դռներ ապակյա մակերեսով գրասենյակներում | մ$^2$ | 15 | 55.00 | 825.00 |
| 2 | Ալյումինե դռներ ապակյա մակերեսով սան. հանգույցներում | մ$^2$ | 5.5 | 55.00 | 302.50 |
| 3 | Ապակյա միջնորմ /տրիպլեքս/ տնօրենի սենյակում | մ$^2$ | 11 | 35.00 | 385.00 |
| 4 | Կամարաձև պատուհանի ապակիների փոխարինում ապակյա փաքեթով | մ$^2$ | 15 | 15.00 | 225.00 |
| 5 | Փայտյա պատուհանների մասնակի ռեստավրացիա | մ$^2$ | 22 | 8.00 | 176.00 |
| | ե) Բազրիքներ, ճաղաշարեր | | | | |
| 1 | 15 մմ հաստ., 120մմ բարձր. բազրիք կոփած ապակուց | մ$^2$ | 18 | 140.00 | 2520.00 |
| 2 | Ճաղաշար մարտկոցների առջևով շպռնապատ ՄԴՖ-ից | մ$^2$ | 2.7 | 45.00 | 121.50 |
| 3 | Պողպատե բազրիք աստիճանների ձախ պատի փորվածքում | մ | 4 | 25.00 | 100.00 |
| | | | | | |
| | 3, Անտրիսոլ,Մետաղական կանգնակ, աստիճաններ և սյուների ուժեղացում | | | | |
| | ա) Անտրիսոլ | | | | |
| 1 | Մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում | կգ | 778.4 | 0.50 | 389.20 |
| 2 | Ամրան AI | կգ | 36.9 | 0.30 | 11.07 |
| 3 | Ամրան A500C | կգ | 75.9 | 0.30 | 22.77 |
| 4 | Տաշտաձև հեծան N18 | կգ | 359 | 0.50 | 179.50 |
| 5 | Երկտավր N16 | կգ | 398 | 0.50 | 199.00 |
| 6 | Թիթեղ | կգ | 21.4 | 0.40 | 8.56 |
| 7 | Թեթև բետոն B 20 դասի | մ$^3$ | 2.8 | 40.00 | 112.00 |
| 8 | Ծանր բետոն B 20 դասի բացված անցքերի տեղում | մ$^3$ | 0.3 | 45.00 | 13.50 |
| | բ) Մետաղական կանգնակ ՄԿ-1 | | | | |
| 1 | Մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում | կգ | 77.38 | 0.50 | 38.69 |
| 2 | Խողովակ 160x160x6 | կգ | 71.1 | 0.50 | 35.55 |
| 3 | Թիթեղ | կգ | 6.28 | 0.40 | 2.51 |
| | գ) Սյուների ուժեղացում ՄՍ-1 | | | | |
| 1 | Մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում | կգ | 242.6 | 0.50 | 121.30 |
| 2 | Ամրան AI | կգ | 28 | 0.30 | 8.40 |
| 3 | Ամրան A500C | կգ | 158 | 0.30 | 47.40 |
| 4 | Թիթեղ | կգ | 56.6 | 0.40 | 22.64 |
| 5 | Ծանր բետոն B 20 դասի | մ$^3$ | 1.2 | 45.00 | 54.00 |
| | դ) Միածույլ աստիճաններ | | | | |
| 1 | Ամրան AI | կգ | 15.5 | 0.30 | 4.65 |

| 1. | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 2 | Ամրան A500C | կգ | 108 | 0.30 | 32.40 |
| 3 | Ծանր բետոն B 20 դասի | մ$^3$ | 1 | 45.00 | 45.00 |
| | | | | | |
| | 4, Ներքին ջեռուցում | | | | |
| 1 | Կաթսա էլեկտրական 28 ԿՎտ | հատ | 1 | 600.00 | 600.00 |
| 2 | Կաթսայի միացման կոմպլեկտ FAR-26 | հատ | 2 | 35.00 | 70.00 |
| 3 | Մարտկոց 101-Խոհանոց 2230Վտ M500/14 | սեկ | 14 | 5.50 | 77.00 |
| | 102-Օֆիս, 7660Վտ | | | | |
| 4 | TEMF,020 300 20, 101 | հատ | 1 | 420.00 | 420.00 |
| 5 | HTEW. 020 090 15 | հատ | 2 | 68.00 | 136.00 |
| | 103-Լսարան, 7135Վտ | | | | |
| 6 | HTEW. 030 100 16 | հատ | 2 | 145.00 | 290.00 |
| 7 | HTEW. 030 160 16 | հատ | 1 | 223.00 | 223.00 |
| 8 | Eiegance միացման կոմպլեկտ E-2 | լ-զմ | 1 | 12.50 | 12.50 |
| 9 | Jaga միացման կ-կտ TEMPO, COLO.SW2.JA.3316 | լ-զմ | 1 | 24.00 | 24.00 |
| 10 | HTEW միացման կ-կտ, FAR | լ-զմ | 5 | 11.00 | 55.00 |
| 11 | Մարտկոցի կախիչ MSU 1 | հատ | 4 | 0.35 | 1.40 |
| 12 | Պրես եռաբաշխիչ 26x26x16 ART262616 | հատ | 2 | 4.30 | 8.60 |
| 13 | Պրես եռաբաշխիչ 26x20x20 ART262020 | հատ | 2 | 3.80 | 7.60 |
| 14 | Պրես եռաբաշխիչ 20x16x20 ART201620 | հատ | 6 | 2.80 | 16.80 |
| 15 | Պրես եռաբաշխիչ 20x16x16 ART201616 | հատ | 5 | 2.70 | 13.50 |
| 16 | Պրես անկյունակ 26x26 AP1510026 | հատ | 8 | 3.50 | 28.00 |
| 17 | Պրես անկյունակ 20x20 AP1510020 | հատ | 6 | 2.20 | 13.20 |
| 18 | Պրես անկյունակ 16x16 AP1510016 | հատ | 4 | 2.00 | 8.00 |
| 19 | Մետաղապլաստե խողովակներ d=26մմ F07KPE260G | մ | 40 | 2.80 | 112.00 |
| 20 | Մետաղապլաստե խողովակներ d=20մմ F07KIE220G | մ | 45 | 1.50 | 67.50 |
| 21 | Մետաղապլաստե խողովակներ d=16մմ F07KIS160G | մ | 65 | 1.00 | 65.00 |
| 22 | Մետաղապլաստե խողովակի ամրակցում | հատ | 40 | 0.08 | 3.20 |
| 23 | Կաթսայի մոնտաժում MK01 | կետ | 1 | 45.00 | 45.00 |
| 24 | Ջեռուցման մոնտաժում MR01 | կետ | 7 | 16.00 | 112.00 |
| 25 | Ջրամատակարարման մոնտաժում MV01 | կետ | 4 | 10.00 | 40.00 |
| | | | | | |
| | 5, Ջրամատակարարում և կոյուղի | | | | |
| | ա) Խմելու տնտեսական ջրմուղ (B1) | | | | |
| 1 | Մետաղապլաստե խողովակներ d=32/26մմ | մ | 35 | 0.70 | 24.50 |
| 2 | Նույնը d=26/20մմ | մ | 5 | 0.60 | 3.00 |
| 3 | Նույնը d=20/15մմ | մ | 4 | 0.50 | 2.00 |
| 4 | Նույնը d=16/12մմ | մ | 33 | 0.40 | 13.20 |
| 5 | Փական d=25մմ | հատ | 1 | 3.00 | 3.00 |
| 6 | Նույնը d=15մմ | հատ | 3 | 2.00 | 6.00 |
| 7 | Մետաղապլաստե խողովակների ֆիտինգներ d=26մմ | հատ | 5 | 2.00 | 10.00 |
| 8 | Նույնը d=20մմ | հատ | 2 | 2.00 | 4.00 |
| 9 | Նույնը d=15մմ | հատ | 6 | 2.00 | 12.00 |
| 10 | Նույնը d=12մմ | հատ | 16 | 2.00 | 32.00 |
| 11 | Բաժանարար սանր 2 տեղով | հատ | 1 | 5.00 | 5.00 |
| 12 | Բաժանարար սանր 4 տեղով | հատ | 1 | 10.00 | 10.00 |
| 13 | Խողովակների ջերմամեկուսացում δ=15մմ | մ$^2$ | 0.25 | 5.00 | 1.25 |
| 14 | Համակարգի փորձարկում | մ | 77 | 3.00 | 231.00 |
| 15 | Միացում գոյություն ունեցող գծին d=65մմ | տեղ | 1 | 2.00 | 2.00 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 16 | Ճկափող Φ10, L=400մմ | հատ | 7 | 0.70 | 4.90 |
| | բ) Տաք ջրամատակարարում (T3,T4) | | | | |
| 1 | Մետաղապլաստե խողովակներ d=20/15մմ | մ | 3 | 0.50 | 1.50 |
| 2 | Նույնը d=16/12մմ | մ | 32 | 0.40 | 12.80 |
| 3 | Փական d=15մմ | հատ | 1 | 2.00 | 2.00 |
| 4 | Բաժանարար սանր 4 տեղով | հատ | 1 | 10.00 | 10.00 |
| 5 | Մետաղապլաստե խողովակների ֆիտինգներ d=15մմ | հատ | 3 | 2.00 | 6.00 |
| 6 | Նույնը d=12մմ | հատ | 9 | 2.00 | 18.00 |
| 7 | Խառնիչ լվացարանի համար | կոմպ. | 3 | 25.00 | 75.00 |
| 8 | Խողովակների ջերմամեկուսացում б=30մմ | $մ^2$ | 0.1 | 7.00 | 0.70 |
| 9 | Համակարգի փորձարկում | մ | 35 | 3.00 | 105.00 |
| 10 | Ճկափող Φ10, L=400մմ | հատ | 4 | 0.70 | 2.80 |
| | գ) Տնտ կենցաղային կոյուղի (K1) | | | | |
| 1 | Կոյուղու պլասմասե խողովակ d=100մմ հողի մեջ | մ | 10 | 7.00 | 70.00 |
| 2 | Նույնը d=50մմ | մ | 11 | 5.00 | 55.00 |
| 3 | Զուգարանակոնք լվացման տակառով | կոմպ. | 3 | 70.00 | 210.00 |
| 4 | Լվացարանակոնք սիֆոնով | կոմպ. | 3 | 60.00 | 180.00 |
| 5 | Պլասմասե ձևավոր մասեր d=100մմ | հատ | 15 | 1.50 | 22.50 |
| 6 | Նույնը d=50մմ | հատ | 15 | 1.00 | 15.00 |
| 7 | Ռևիզիա՝ Հոսակ d=100մմ | հատ | 1 | 8.00 | 8.00 |
| 8 | Նույնը d=50մմ | հատ | 1 | 5.00 | 5.00 |
| 9 | Համակարգի փորձարկում | մ | 21 | 3.00 | 63.00 |
| 10 | Հատակի բետոնե շերտի քանդում և վերականգնում | $մ^3$ | 0.5 | 50.00 | 25.00 |
| 11 | Միացում գոյություն ունեցող կոյուղու գծին d=100մմ | տեղ | 2 | 2.00 | 4.00 |
| | | | | | |
| | 6,Ներքին էլ.մատակարարում: Հեռախոսային և համակարգչային ցանցեր | | | | |
| | ա) Ներքին էլ.մատակարարում | | | | |
| 1 | Ավտոմատ անջատիչ եռաբևեռ 100Ա նոմինալ հոսանքի | հատ | 1 | 10.00 | 10.00 |
| 2 | Նույնը 63Ա | հատ | 1 | 7.00 | 7.00 |
| 3 | Նույնը 40Ա | հատ | 1 | 6.00 | 6.00 |
| 4 | Նույնը մաբևեռ 25Ա | հատ | 12 | 5.50 | 66.00 |
| 5 | Լուսավորության վահանակ 24+2 տեղի | հատ | 1 | 12.00 | 12.00 |
| 6 | Վարդակ հողանցիչով | հատ | 60 | 1.20 | 72.00 |
| 7 | Անջատիչ մեկստեղնավոր | հատ | 7 | 1.20 | 8.40 |
| 8 | Անջատիչ երկստեղնավոր | հատ | 6 | 1.30 | 7.80 |
| 9 | Փոխարկիչ 2 ուղղության | հատ | 2 | 2.50 | 5.00 |
| 10 | Լուսատու առաստաղային կախովի 100Վտ լամպի համար | հատ | 35 | 12.00 | 420.00 |
| 11 | Նույնը, ներսարքված առաստաղի մեջ | հատ | 12 | 5.00 | 60.00 |
| 12 | Նույնը, «Պլաֆոն» տիպի | հատ | 6 | 8.00 | 48.00 |
| 13 | Նույնը երկլամպանի | հատ | 27 | 12.00 | 324.00 |
| 14 | Լամպ շիկացման 75, 100Վտ | հատ | 107 | 0.15 | 16.05 |
| 15 | Տուփ վարդակ և անջատիչ տեղադրման համար | հատ | 65 | 1.00 | 65.00 |
| 16 | Տուփ ճուղավորման | հատ | 20 | 1.00 | 20.00 |
| 17 | Հաղորդալար պղնձե ջղերով ПВ-2,5$մմ^2$ | մ | 2300 | 0.35 | 805.00 |
| 18 | Մալուխ պղնձե ջղերով ВВГ -5x16$մմ^2$ | մ | 35 | 6.00 | 210.00 |
| 19 | 100x20մմ ակոսի բացում սվաղի մեջ և վերականգնում | մ | 200 | 0.25 | 50.00 |

| 1. | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | բ) հեռախոսային և համակարգչային ցանցեր | | | | |
| 1 | Վարդակ հեռախոսային | հատ | 5 | 2.20 | 11.00 |
| 2 | Վարդակ համակարգչային | հատ | 10 | 2.50 | 25.00 |
| 3 | Տուփ վարդակների տեղադրման համար | հատ | 15 | 1.00 | 15.00 |
| 4 | Հաղորդալար UTP-5 | մ | 400 | 0.35 | 140.00 |
| 5 | 50x20մմ ակոսի բացում սվաղի մեջ | մ | 100 | 0.150 | 15.00 |
| | Ընդամենը՝ | | | | 28142.24 |
| | Շահույթ 9% | | | | 2532.80 |
| | Ընդամենը՝ | | | | 30675.04 |
| | Ա Ա Հ 20% | | | | 6135.01 |
| | Ընդհանուրը՝ | | | | 36810.05 |

## ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| | |
|---|---|
| ՀՀ արտաքին գործերի նախարարության<br>ք.Երևան, Կառավարական 2 շենք<br>ՀՀ Ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի<br>•ործառնական վարչություն<br>Հ/հ 900011196368<br>ՀՎՀՀ 02527728<br>------------------------- Ռ. [illegible] | «ԷԴՌԻՉ ՇԻՆ» ՍՊԸ<br>ք.Երևան, Թոքովենցի 5, բն 27<br>«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ<br>[illegible]24723901[illegible]4320010<br>ՀՎՀՀ 00858311<br>------------------------- Է. [illegible]աննեսյան |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2009 թվականի N 1473 - Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 1573-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասին և 19-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում կատարել վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1573-Ն որոշման N 5 հավելվածում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության դիվանագիտական դպրոցի հիմնանորոգման աշխատանքներն իրականացնելու համար Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը 2009 թվականի չորրորդ եռամսյակում հատկացնել 42383.0 հազ. դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով):





3. Սահմանել, որ սույն որոշման հիման վրա գնվելիք աշխատանքների կատարման պայմանագրով կարող է նախատեսվել կանխավճարի հատկացում պայմանագրի գնի մինչև 100 տոկոսի չափով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ — Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2009 թ. դեկտեմբերի 26
Երևան

28560

28 DEC 2009

Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
դեկտեմբերի 24-ի N 1473 - Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 1573- Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ. դրամ)

| Բաժինը | Խումբը | Դասը | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման խմբերի և ենթախմբերի, տնտեսագիտական դասակարգման հոդվածների, ֆինանսավորվող ծրագրերի և դրանք իրականացնող մարմինների անվանումները | Ցուցանիշների փոփոխությունները (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) |
|---|---|---|---|---|
| | | | | տարի |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | | | ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ | 0 |
| | | | այդ թվում՝ | |
| 01 | | | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | (42383.0) |
| | | | այդ թվում՝ | |
| | 01 | | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ | (42383.0) |
| | | | այդ թվում՝ | |
| | | 03 | Արտաքին հարաբերություններ | (42383.0) |
| | | | այդ թվում՝ | |
| | | | 01.ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանում | |
| | | | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | (42383.0) |
| | | | որից՝<br>բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ծախսեր» հոդվածով | (42383.0) |
| 11 | | | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ | 42383.0 |
| | | | այդ թվում՝ | |
| | 01 | | ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ | 42383.0 |
| | | | այդ թվում՝ | |
| | | 01 | ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ | 42383.0 |
| | | | այդ թվում՝ | |
| | | | 01. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ | 42383.0 |
| | | | ՀՀ կառավարություն | 42383.0 |





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ